

WWW.ARMENIAFUND.ORG

MY HOME ARMENIA

ARMENIA FUND QUARTERLY NEWSLETTER

#3 / QUARTER THREE, 2017

"FRUITFUL ARTSAKH:"
GEARING UP FOR AN AGRICULTURAL REVOLUTION
THE ENDURING LEGACY OF HACOP BAGHDASSARIAN

**ՆԵՐՍԸ ՀԱՅԵՐԷՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**



"FRUITFUL GEARING UP FOR AN

Artsakh is not just one of the most beautiful countries in the world; given its wonderful climate and fertile soil, it also has the potential of becoming an agricultural powerhouse. So why hasn't it yet? The answer is, simply, water — not the lack of it, and certainly not the lack of know-how or the willingness to harness it, but the financial means to get it from point A to point B.

Today, Armenia Fund has begun to address this crucial issue by launching a project that will boost agriculture in Artsakh like never before. It is an ambitious, comprehensive initiative that aims to build a slew of infrastructures and refurbish existing ones, introduce cutting-edge technologies, and revolutionize the agricultural sector as a whole through the method of drip irrigation.

Titled "Fruitful Artsakh," the project will be officially unveiled at Armenia Fund's annual Thanksgiving Day Telethon on November 23, and function as the organization's newest flagship program, well into 2022.



*The drip-irrigation system first pumps water from underground. /
Կաթիլային ոռոգման համակարգը նախ ջուր կը մղէ գետնին տակէն:*

In its first five-year phase of implementation alone, "Fruitful Artsakh" is expected to create close to 6,000 jobs and increase crop-raisers' profits up to twentyfold. As significantly, the project is poised to have a proliferating effect, paving the way for an array of auxiliary new industries, services, and infrastructures, and functioning as a template for success which more and more crop farmers across Artsakh and Armenia are certain to go on to emulate.

The ultimate goal of the project is to enable the cultivation of over 250,000 acres of land, thereby catapulting the economy of Artsakh to an unprecedented

level. This, in turn, will raise living standards to those of industrialized nations, and ensure that the citizens of Artsakh will have a tangible, compelling reason to continue to live and thrive in their communities.

Getting to the source

Artsakh has more than 250,000 acres of arable land. Yet, astonishingly, only 7 percent of those lands are cultivated, leaving the remaining 93 percent unused.

There is a twofold problem behind this state of affairs. First,

ARTSAKH:" AGRICULTURAL REVOLUTION

Artsakh's largest rivers and other surface bodies of water are located in the northwestern part of the country, while agricultural lands are found mostly in the southeast. Bringing water from the north to irrigate the southern lands would be so expensive as to be simply unfeasible. The other part of the problem is that while southern Artsakh has vast water resources, they remain largely inaccessible, as they're located below ground, at depths of up to 300 feet. The solution, therefore, would be to bring this wealth of water to the surface for irrigation.

It's a solution that is at the heart of Armenia Fund's "Fruitful Artsakh" project. Generating irrigation water entails a comprehensive set of steps. It includes digging deep-water wells, building power lines and connecting them to industrial-grade water pumps, linking the latter to filtration systems and pipes spanning entire fields, and, finally, installing drip-irrigation systems and connecting them to underground water pipes. This last component will be implemented by the government of Artsakh, through its agricultural-development program.

Drip irrigation has been a quantum leap in agriculture, as it's able to turn even barren deserts into lush fields. Here's how it works: instead of traveling through an open-air canal, the water travels through thin





Water is then distributed through tubes. This allows for water to drip slowly to the roots of plants, either from above the soil surface or buried below the surface. / Ջուրը ապա կը բաշխուի խողովակներով: Այսպէս, ջուրը դանդաղօրէն կաթելով կը հասնի բոյսերու արմատներուն, բխելով գետնի մակերեսին վրայէն կամ գետնին տակէն:

plastic pipes with tiny holes on the bottom. As the water flows through the pipes, it drip-irrigates the ground on which they're installed. Therefore the water feeds the plant by dripping directly above the root, without being wasted or vaporized.

Each deep-water well in Artsakh can provide irrigation for up to 60 acres of land. Currently, farmers in the country make an average of \$120 from an acre of land. The reason for such low profit margins is that farmers are limited to growing crops like wheat and rye, relying primarily on rainwater, instead of raising high-profit but irrigation-intensive crops such as vegetables, fruits, and nuts. Drip-irrigation systems will be a blessing for Artsakh farmers, allowing them to diversify their crops and see their profits jump to the neighborhood of \$3,000 per acre.

What makes the "Fruitful Artsakh" project all the more remarkable is that it will have a wide multiplier effect. This will include not only the construction of power lines and various irrigation infrastructures,

but also the establishment of factories for processing fruits and vegetables, storage and packing facilities, and export companies, as well as sapling and seedling production services. Moreover, the project will result in systemic progress in terms of professional growth and know-how, with advanced trainings provided to farmers, and the preparation of new cadres of agronomists. These activities will create thousands of additional jobs, further contributing to the country's economic vitality.

Drip irrigation at work: the story of the Aghajanyans

The Aghajanyan family orchard, in the Martuni Region's Berdashen village, is a wonderful testament to the effectiveness of drip irrigation fed by a deep-water well. Seven years ago, Sarmen Aghajanyan, along with his father and three brothers, decided to reap the benefits of the rich Artsakh soil. "Mainly, we grew wheat and rye," Sarmen Aghajanyan recalls. "But, at

one point, we decided to start a fruit orchard. We began with 25 acres."

They planted rows of pomegranate trees. Had it not been for the drip-irrigation system they adopted, their initial 25 acres would have no chance of being expanded into an astounding 150 acres. "It used to take nearly a month to water the whole orchard — and at an extremely high rate of water loss and labor costs," Aghajanyan says. "But then we installed a drip-irrigation system, because it's simply impossible to maintain efficiency without it. Today, we can water the entire orchard in a very short time — in about three days — and using high-quality water without any loss."

Given the effectiveness of drip irrigation, the family is now considering not just planting more pomegranate trees, but raising other crops as well.

There's a commonly held opinion that one can't make a good living by cultivating land. This is why many throughout Artsakh leave their villages and move to cities, even migrate to other countries. Today, with their hard work and dedication, the Aghajanyans are certainly proving that opinion wrong.

"Once groundwater is located, it takes only a week to drill a deep-water well, and only a maximum of ten days after that to start irrigating the land," says Aram Mkhoyan, Artsakh's Minister of Agriculture. "I can't imagine a more effective, affordable, or simpler solution."

Sarmen Aghajanyan's parting words perhaps capture the essence of the "Fruitful Artsakh" project best. "We've created all this on land that's about 12 kilometers from our enemy," he says, referring to the family orchard. "We're not going anywhere. This is our land, and we're staying right here."

«ԲԵՐՔԱՌԱՏ ԱՐՑԱԽ»

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՄԸ ՇԵՄԻՆ

Արցախը ոչ միայն աշխարհի ամենէն գեղեցիկ երկիրներէն մէկն է, այլ տրուած ըլլալով իր հոյակապ կլիման եւ պարարտ հողը, կարողականութիւնը ունի երկրագործական հսկայ մը դառնալու: Ուրեմն ինչո՞ւ այս կէտին չէ հասած տակաւին: Պատասխանը, պարզապէս, ջուրն է – ոչ թէ ջուրի պակասը, եւ վստահաբար ոչ թէ ջուրի օգտագործման համար գիտելիքի կամ պատրաստակամութեան պակասը, այլ ջուրի մէկ կէտէն միւս կէտը փոխադրութեան պահանջած դրամական միջոցներու բացակայութիւնը:

Այսօր Հայաստան Հիմնադրամը սկսած է լուծել այս տարրական հարցը՝ մեկնարկելով ծրագիր մը, որ անելի քան երբեք պիտի խթանէ Արցախի երկրագործութիւնը: Դէպի ապագան նայող ու բազմակողմանի ծրագիր մըն է այս, որ կը միտի ստեղծել մեծ թուով ենթակառուցներ եւ նորոգել գոյութիւն ունեցողները, ի գործ դնել գիտարուեստական ամենավերջին հնարքները, եւ յեղափոխել գիւղատնտեսական ոլորտը կաթիլային ոռոգման միջոցով:

«Բերքառատ Արցախ» խորագրուած՝ ծրագիրը պաշտօնապէս պիտի յայտարարուի Հայաստան Հիմնադրամի Նոյեմբեր 23-ին կայանալիք Գոհաբանութեան

Օրուայ Թելեթոնին, եւ պիտի հանդիսանայ կազմակերպութեան գլխաւոր ծրագիրը, մինչեւ առ նուազն 2022:

Կ'անկալուի, որ գործադրման իր առաջին հնգամեայ փուլին ընթացքին միայն, «Բերքառատ Արցախ»ը պիտի ստեղծէ գրեթէ 6,000 գործ եւ մինչեւ իսկ քսանապատիկ պիտի բարձրացնէ երկրագործներու շահոյթը: Նոյնքան նշանակալիօրէն, ծրագիրը պիտի առաջնորդէ հողի մը նոր եւ լրացուցիչ ձարտարարութեան, ծառայութիւններու, ու ենթակառուցներու հաստատման, եւ պիտի հանդիսանայ գիւղատնտեսական յաջողութեան կաղապար մը, զոր անելի ու անելի երկրագործներ Արցախ թէ Հայաստան, վստահաբար պիտի օրինակեն:

Ծրագրի հեռաւոր նպատակն է կարելի դարձնել 250,000 արտավար (acre) հողի մշակումը, այսպիսով Արցախի տնտեսութիւնը բարձրացնելով աննախընթաց մակարդակի մը: Այս, իր կարգին, Արցախի կենսամակարդակը պիտի հասցնէ ձարտարարութեան անցում երկիրներու չափանիշներուն, ապահովելով, որ Արցախցիները շօշափելի եւ համոզիչ պատճառ մը պիտի ունենան իրենց համայնքներուն մէջ շարունակել բնակելու ու բարգաւաճելու:

ՋՈՒՐԻ ԱԿՈՒՆՔԸ

Արցախը աելի քան 250,000 արտավար մշակելի հող ունի: Սակայն, ապշեցուցիչորեն, այս հողերու միայն 7 տոկոսը մշակուած է. մնացեալ 93 տոկոսը խոյան կը մնայ:

Պատճառը երկծալ է: Նախ՝ Արցախի մեծագոյն գետերն ու մակերեսի այլ ջրային մարմինները կը գտնուին երկրի հիւսիս-արեւմտեան մասը, մինչդեռ մշակելի հողերը մեծաւ մասամբ հարաւ-արեւելեան շրջաններուն մէջ են: Հարաւային հողերը ոռոգելու համար հիւսիսէն ջուր բերելը անգործադրելի ըլլալու աստիճան ծախսալից է: Յետոյ՝ թէեւ հարաւային Արցախը ջրային հսկայական հարստութիւն ունի, ջուրին մեծամասնութիւնը անմատչելի կը մնայ որովհետեւ ընդատակեայ է, մինչեւ 300 ոտք խորքով: Լուծումը, ուրեմն, ջուրը մակերես բերելն է՝ ոռոգման համար:

Լուծում մըն է այս, որ կը կապմէ «Բերքառատ Արցախ» ծրագրին

կորիզը: Ոռոգման համար ջուր յառաջացնելը կ'ենթադրէ շարք մը լրացուցիչ միջոցառումներ, ներառեալ խորքային հորեր փորել, ելեկտրական գիծեր կառուցել եւ վանոնք միացնել ճարտարարուեստական որակի ջրհաններու (water pumps), այս վերջինները կապել պտիչ համակարգերու եւ մշակելի դաշտերու ամբողջ տարածքին տեղադրուած խողովակներու, եւ, վերջապէս, կաթիլային ոռոգման համակարգեր տեղադրել եւ վանոնք միացնել ընդատակեայ ջուրի խողովակներու: Այս վերջին բաղադրիչը պիտի գործադրուի Արցախի կառավարութեան կողմէ՝ գիւղատնտեսական վարգացման իր ծրագրին ընդմէջէն:

Կաթիլային ոռոգումը հսկայական յառաջդիմութիւն մըն է երկրագործութեան մէջ, որովհետեւ կարողութիւնը ունի նոյնիսկ անապատ մը արգասաբեր դաշտի վերածելու: Ահա թէ ինչպէս կը գործէ – փոխանակ բացօթեայ ջրանցքի մը մէջէն հոսելու, ջուրը կը հոսի բարակ, փլաստիկ, յատակը փոքր ծակերով

խողովակներու մէջէն: Երբ ջուրը կը հոսի այս խողովակներէն, կաթիլներով կ'ոռոգէ հողը, որու տարածքին տեղադրուած են խողովակները: Հետեաբար ջուրը ցանուած բոյսը կը սնանէ՝ կաթելով ուղղակիօրէն արմատին վրայ, առանց որեւէ վատնումի կամ գոլորշիացման:

Արցախի խորքային հորերէն իւրաքանչիւր կրնայ ոռոգում հայթայթել մինչեւ 60 արտավար հողի համար: Ներկայիս երկրի հողամշակները մէկ արտավար հողէն միջին հաշուով միայն \$120 շահոյթ ունին: Պատճառը այն է, որ հողամշակները ստիպուած են ցորեն, գարի, եւ քիչ շահ բերող նմանօրինակ բոյսեր մշակել՝ հիմնականօրէն անձրեւաջուրի վստահելով, փոխանակ մշակելու բարձր շահ ապահովող բայց առատ ոռոգում պահանջող բոյսեր, ինչպէս օրինակ՝ բանջարեղէն, պտուղներ, ինչպէս նաեւ կաղին, ընկոյզ, նուշ, եւ պիստակ: Կաթիլային ոռոգման համակարգերը օրինութիւն մը պիտի ըլլան Արցախի երկրագործներուն համար, թոյլ



Each farmer will receive a system similar to the one above, for pumping and distributing water to individual fields. / Իւրաքանչիւր երկրագործ պիտի ստանայ լուսանկարին մէջ երեւցողին նման համակարգ մը, որուն միջոցաւ ջուր պիտի մղուի եւ բաշխուի անհատական դաշտերու:

տալով ճոխացնել իրենց ցանքի տեսականին եւ մինչեւ \$3,000 շահ ապահովել իւրաքանչիւր արտավարէն:

«Բերքառատ Արցախ»ի կարեւորութիւնը կը յատկանշուի նոյնքան այն իրողութեամբ, որ ծրագիրը բազմապատկիչ ակդեցութիւն պիտի ունենայ: Այսինքն, անոր շնորհիւ, ոչ միայն պիտի կառուցուին ելեկտրական գիծեր եւ ոռոգման վանապան ենթակառոցներ, այլ նաեւ պիտի հաստատուին պահածոյացման գործարաններ, պահեստաւորման, փաթեթաւորման, ու արտածման ընկերութիւններ, եւ տնկիի ու սերմնացուի արտադրութեան սպասարկութիւններ: Աւելին, ծրագրին շնորհիւ մասնագիտական ընդհանուր յառաջդիմութիւն պիտի արձանագրուի Արցախի երկրագործութեան ոլորտէն ներս՝ թէ՛ արհեստավարժական հմտութեան եւ թէ՛ գիտելիքի իմաստներով. յառաջացած մարկում պիտի տրամադրուի հողամշակներուն, եւ մասնագետ գիւղատնտեսներու նոր սերունդներ պիտի պատրաստուին: Այս աշխատանքները յաւելեալ բազմաօգուտ գործ պիտի ստեղծեն, իրենց կարգին սատարելով Արցախի տնտեսական բարգաւաճման:

ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՈՒՄ – ԱՂԱՋԱՆՅԱՆՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Աղաջանյան ընտանիքի այգին, Մարտունիի շրջանի Բերդաշէն գիւղին մէջ, խորքային հորերէ սնուող կաթիլային համակարգի արդիւնաւետութեան խօսուն վկայ մըն է: Եօթը տարի առաջ, Սարմեն Աղաջանյանը, իր հօր եւ երեք եղբայրներուն հետ, որոշեց օգտուիլ Արցախի հողի առատաձեռնութենէն: «Հիմնականում զբաղուում էինք գիւղատնտեսական այլ գործերով՝ ցորենի, գարու գործերով, բայց որոշեցինք, որ այգի մշակենք, այգեգործութեամբ զբաղուենք», Սարմեն Աղաջանյան կը յայտնէ: «Սկսել ենք 25 արտավարից»:

Ուրեմն շարքերով նռնենիի ցանեցին: Եթէ կաթիլային ոռոգման համակարգը որդեգրած չըլլային, անկարելի պիտի ըլլար, որ իրենց սկզբնական 25 արտավարը ընդարձակուէր աներեւակայելի տարողութեամբ՝ 150 արտավարի: «Զրում էինք մօտ մի ամսում, ջրի մեծ քանակութեան կորուստներով ու մեծ ծախսերով, բանուորական մեծ ծախսերով», Աղաջանյան կը յիշէ: «Որոշեցինք կաթիլային համակարգ տեղադրել, որովհետեւ առանց կաթիլային համակարգի հնարաւոր չի: Էս պահի դրութեամբ շատ կարճ ժամանակում հնարաւոր է մեր այգին ջրել, մօտ երեք օրում, ու շատ որակով ջրի քանակը անկորուստ»:

Քաջալերուած՝ կաթիլային ոռոգման արդիւնաւետութենէն, Աղաջանյանները ներկայիս կը մտածեն ոչ միայն նռնենիներու քանակը աւելցնելու, այլ նաեւ իրենց տեսականին բազմապատկելու մասին:

Կայ տարածուած կարծիք մը, թէ կարելի չէ հողի մշակմամբ լաւ ապրուստ ապահովել: Ահա թէ ինչու Արցախի տարածքին շատեր կը լքեն իրենց գիւղը եւ քաղաք կ'երթան, նոյնիսկ կ'արտագաղթեն այլ երկիրներ: Այսօր, իրենց աշխատասիրութեամբ եւ նուիրումով, Աղաջանյանները որոշապէս կը հերքեն այդ կարծիքը:

«Ուսումնասիրելուց յետոյ, ընդամենը մէկ շաբաթում կարելի է սկսել հորատման աշխատանքները, եւ մէկ շաբաթ, տաս օր յետոյ, տուեալ տարածքը ոռոգելի դարձնել», կը յայտնէ Արցախի Գիւղատնտեսութեան նախարար Արամ Մխոյանը: «Սրանից կարճ, արդիւնաւետ, էժան ձանապարհ չկայ»:

Սարմեն Աղաջանյանի եզրակացութիւնը թերեւս լաւագոյնս կը փոխանցէ «Բերքառատ Արցախ» ծրագրի էութիւնը: «Հիմա մենք մեր թշնամուց մօտ մի 12 քիլոմետր հեռաւորութեան վրայ ենք էսքանը ստեղծել. էլ գնալու ոչ մի տեղ էլ չկայ», կ'ըսէ ան: «Մենք մեր հողի վրայ ենք»:



ՀԵՌՈՒՄՏԱՄԱՐԱԹՈՆ 2017



HELP BRING MODERN IRRIGATION TECHNOLOGIES TO ՆԵՐԴՆԵՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

BECAUSE OF NO
IRRIGATION WATER, ARTSAKH
CULTIVATES ONLY 7% OF ITS
AGRICULTURAL
LANDS


ՈՌՈԳՄԱՆ
ՊԼԱՆԻ
ՕԳՏԱԳՈՐ
ԳՅՈՒՂԱՑՆ
ՄԻԱՅՆ 7%

By extracting underground water and irrigating high-profit crops with drip method, annual revenue from a 60-acre field can increase from today's \$7,200 to \$150,000.

Օգտագործելով կաթիլային խոտարեկան եղանակը, 60 հեկտարի վրա աճեցվող բարձր պրոֆիտ համարյա 20 անգամ կավելանալ

“FRUITFUL ARTSAKH”
AGRICULTURAL DEVELOPMENT
PROGRAM CAN GENERATE 6,000
NEW JOBS IN 5 YEARS!

«ԲԵՐԶԱՌԱՎԱՐ
ԳՅՈՒՂԱՑՆԵՐԻ
ԵՐԱԳԻՐԸ 5
ՍՏԵՂԾԵԼ 6,000



HIGH PROFIT CROPS: Vegetables | Fruits | Aboveground Nuts

ԲԱՐՁՐ ԵԿԱՄՈՒՏ ԱՊԱՅՈՎՈՂ ԲՈՒՅՍԵՐ Բանջարեղեն | Մրգեր | Ընկուզեղեն


HELP ARMENIAN FARMERS HAVE A GO
ՕԳՆԵՔ ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ԼԱՎ ԵԿԱՄՈՒՏ

Ի՞նչ արձանագրություն եմ օգտագործում ՆԱԶ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ:

ՋՐԻ
ՊԱՏՃԱՌՈՎ, ԱՐՑԱԽՆ
ԾՈՒՄ Է ԻՐ
ՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ
%:

լով ստորգետնյա ջուրն ու դաշտը
մեթոդով ոռոգելով հայ գյուղացու
կամուռը 60 էլքր հողից կարող է
լա \$7,200 դոլարից՝ \$150,000 դոլար:

Տ ԱՐՅԱԽ»
ՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
Տ ՏԱՐՈՒԻ ԿԱՐՈՂ Է
1,000 ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂ:



GOOD INCOME AND STAY IN ARMENIA!

ԻՏ ՄՏԱՆԱԼ ԵՒ ԿԱՆԽԵՔ ԱՐՏԱԳԱՂԹԸ



*Hacop Baghdassarian.
Յակոբ Բաղդասարյան:*

Nestled among gentle green slopes and bordered by a tributary of the Karkar River, Krasni is a quintessential Artsakh village: timeless in its breathtaking beauty; timeless in the hospitality of its hardy residents and their deep-rooted traditions.

Yet the word “timeless,” in reference to rural communities across Armenia and Artsakh, still remains perilously conditional. That’s because if economic opportunity is lacking, and if infrastructure investment is nonexistent or marginal, it’s only a matter of time before people leave their towns and villages in search of work — and ultimately in search of a better life for their children.

This is a reality which the Hayastan All-Armenian Fund has grasped from the very first moment of its launch in 1992. It’s a core reason that, as of 2017, it has invested over \$350 million toward the prosperity of the Armenian homeland, encompassing every conceivable sector of development. And it’s a reality which the Fund’s benefactors have taken on energetically, as both challenge and duty. Hacop Baghdassarian,

THE ENDURING LEGACY OF HACOP BAGHDASSARIAN

who passed away in September 2017, was among those devoted benefactors.

What made Baghdassarian such a remarkable philanthropist was not just his down-to-earth demeanor and extraordinary generosity, but his inexhaustible passion for helping empower his compatriots to fulfill their potential. Baghdassarian was an avid supporter of the Armenian Educational Foundation because he believed in the singular importance of education. And he was a staunch supporter of Armenia Fund because he understood, beginning with the first-ever Telethon, that the Fund’s work is all about enabling communities throughout the homeland to reach for greatness.

Today, the outlines of a wonderful structure are coming into view in Krasni. This is the

future community center of the village, designed and built by Armenia Fund, and the last project to be sponsored by Baghdassarian before his passing. It’s part of a legacy that’s coming to life day by day, as construction crews forge the building into shape, to the immense joy, even incredulity, of the local residents. When Armenia Fund sought Baghdassarian’s support for building the community center, the fact that Krasni has a population of less than 300 actually made the initiative more appealing to him. He thought every village in Artsakh, irrespective of its size or location, is precious in its own right, equally worthy of our attention and care.

Like scores of other multifunctional community centers built by Armenia Fund throughout Armenia and Artsakh, the one now being constructed in



Hacop Baghdassarian flanked by his sons Peter (L) and Gevik (R) at the Armenia Fund Telethon. Mr. Baghdassarian never missed a Telethon as it was his Thanksgiving Day tradition. / Յակոբ Բաղդասարյանն իր սրտով՝ Փիթըրին (ձախ) եւ Գեւիկին (աջ) հետ՝ Հայաստան Հիմնադրամի թելեթոնին: Պրն. Բաղդասարյանն կը մասնակցէր Հիմնադրամի բոլոր թելեթոններուն, անխտիր, որպէս Գոհաբանութեան Օրուայ աւանդ:



The construction of the Krasni community center in Artsakh is being made possible by a contribution from Mr. Hacıoğlu Bağdassarian. / Արցախի Քոհակի գիւղի համայնքային կենտրոնի կառուցումը կիրառությունի Պրն. Յակոբ Բաղդասարյանի նուիրատուութեամբ:

Krasni is of vital importance to the civic, economic, and cultural development of the village. For starters, the community center will spell the end to a number of long-standing issues. Among these is the fact that Krasni's municipality has had to make do with a woefully inadequate,

computing center, as well as auxiliary rooms. This will be a state-of-the-art facility, complete with central heating, air-conditioning, and other amenities and comforts. As part of the project, the community center will also be fully furnished and provided with computer systems

experience it," Bağdassarian has said in a recent interview. "To me, even a relatively small-scale project such as providing the classrooms of a school with new desks is invaluable, as it brings joy to the faces of students, strengthens their attachment to their school. If

“NOTHING COMPARES TO THE THRILL OF GIVING AND SEEING ITS RESULTS, AND I WISH EVERYONE CAN EXPERIENCE IT”

dilapidated structure, and the fact that the medical clinic of the village currently operates out of a small, cramped space inside the community school.


Slated to open in summer 2018, the community center will house not only municipal and administrative offices and the medical clinic, but a multi-purpose hall, a library, and a

and online access. The goal is multifold: to streamline and improve public services, foster more robust civic engagement, and, ultimately, give residents one more compelling reason to continue to live and work in their birthplace.

"Nothing compares to the thrill of giving and seeing its results, and I wish everyone can

everybody supports Armenia Fund in its quest to improve lives in our homeland, imagine what an enormous difference would be made."

In Krasni, the difference Bağdassarian has referred to will take the form of a vibrant, creative, and, yes, *joyous* civic life revolving around the brand-new community center



of the village. Thanks to the project, municipal affairs will be conducted with unprecedented ease and efficiency; children and young people will be able to expand their horizons by using the facility's library and computer room, especially through access to the Internet; the event hall will be used for theatrical productions and movie screenings, as well as various banquets and celebrations; and the medical clinic will provide residents with top-notch care, in a welcoming and comfortable space.

All this is part and parcel of the cherished vision that was pursued by Hacop Baghdassarian — a modest, tireless, and deeply inspiring guardian angel who, from thousands of miles away, dreamed of bettering the lives of his compatriots and gave generously for the realization of his goal.



ՅԱԿՈԲ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ ԿԵՆԱՐԱՐ ԺԱՌԱՆԳԸ



Mr. and Mrs. Hacop and Hilda
Baghdassarian. Տրեւ Տիկ. Յակոբ եւ
Հիլդա Բաղդասարեան:

Մեղմ ու կանաչազարդ բարձունքներու միջեւ ծաղկած՝ Կարկառ Գետի վտակի կողքին, Քոասնին էպէս Արցախեան գիւղ մըն է – յաւերժական՝ իր սքանչելի գեղեցկութեամբ, յաւերժական՝ իր չարքաշ բնակիչներու հիւրասիրութեամբ ու դարաւոր աւանդներով:

Բայց «Եաւերժական» բառը՝ որպէս նկարագրութիւն մը Հայաստանի ու Արցախի գիւղական համայնքներուն, տակաւին վտանգաւոր կերպով պայմանական կը մնայ: Պատճառը այն է, որ եթէ տնտեսական պատեհութիւնը կը պակսի, եւ եթէ ենթակառուցային ներդրումը անգոյ կամ չնչին է, ժամանակի հարց է միայն որ մարդիկ լքեն իրենց գիւղերն ու աւանները՝ աշխատանքի փնտռողով – եւ, վերջին հաշուով, իրենց զաւակներուն համար աւելի լաւ կեանքի մը հեռանկարով:

Իրականութիւն մըն է այս, որ Հայաստան Համահայկական Հիմնադրամը ըմբռնած է իր մեկնարկման առաջին իսկ վայրկեանէն՝ 1992-էն ի վեր: Արմատական պատճառ մը հետեւաբար, որ այդ թուականէն մինչեւ 2017, Հիմնադրամը աւելի քան \$350 միլիոն ներդրած է հայրենիքի բարգաւաճման համար, ընդգրկելով վարձագման մէն մի երեւակայելի բնագաւառ, եւ որ կազմակերպութեան բարերարները աշխուժօրէն ստանձնած են շրջափոխել հայրենի համայնքներու իրավիճակը՝ իրենց առաքելութիւնը վերցնելով որպէս մարտահրաւեր ու պարտականութիւն: Յակոբ Բաղդասարեան, որ մեզմէ առնաւտ բաժնուեցաւ Սեպտեմբեր 2017-ին, այդ նուիրեալ բարերարներէն էր:

Եզակի բարերար մըն էր Բաղդասարեան, տրուած ըլլալով ոչ միայն իր խոնարհ

անհատականությունն ու բացառիկ առատաձեռնությունը, այլ նաեւ անհատնում եռանդը ինչ կը վերաբերէր օգնելու, որ իր հայրենակիցները կարենային խոշոր նուաճումներու վերածել իրենց կարողականութիւնը: Բաղդասարեան Հայ Կրթական Հիմնարկութեան սիւներէն էր, որովհետեւ կը հաւատար ուսման բացարձակ կարելիութեան: Եւ էր նուիրեալ մը Հայաստան

Բաղդասարեանի հովանաւորած վերջին ծրագիրը: Յուշի ժառանգ մը արտայայտող ձեռնարկութիւն մըն է այս, որ կեանքի կը կոչուի օրէ օր, երբ շինարարները կը բարձրացնեն շէնքը շերտ առ շերտ՝ երբեմն իրենց իսկ աչքերուն չհաւատացող տեղացի բնակիչներուն անչափ ուրախութիւն պատճառելով: Երբ Հայաստան Հիմնադրամը Բաղդասարեանի

Ինչպէս Հայաստանի ու Արցախի տարածքին Հիմնադրամին կողմէ կառուցուած տասնեակաւոր այլ բազմահանգամանք համայնքային կեդրոնները, Քռասնիի մէջ ներկայիս շինուող կեդրոնը կենսականօրէն կարելոր է գիւղի հանրային, տնտեսական, եւ մշակութային զարգացման համար: Առաջին հերթին, համայնքային կեդրոնը իր գոյութեամբ պիտի լուծէ կարգ

“ ՈՉԻՆՉ ԿԸ ԲԱՂԴԱՏՈՒԻ ԱՅՆ ԽԱՅՏԱՆՔԻՆ, ՈՐ ԿԸ ԲԻՒ ՕԳՆԵԼՈՒ ԱՐԱՐՔԷՆ ԵՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔԸ ՏԵՍՆԵԼԷՆ. ԵՐԱՆԻ ԱՄԷՆ ՄԱՐԴ ԿԱՐԵՆԱՅ ԱՊՐԻԼ ԱՅԴ ԽԱՅՏԱՆՔԸ ”

Հիմնադրամին, որովհետեւ ըմբռնած էր, առաջին իսկ թելեթոնէն, թէ Հիմնադրամը կը միտէր Հայաստանի ու Արցախի ամբողջ տարածքին համայնքներու ուժականացմամբ խթանել հայրենիքի վերելքը:

Այսօր հոյակապ շէնքի մը ուրուագիծերը տակաւ ի յայտ կու գան Քռասնիի մէջ: Ասիկա գիւղի ապագայ համայնքային կեդրոնն է՝ Հայաստան Հիմնադրամին կողմէ յղացուած ու կառուցուող, եւ

օժանդակութիւնը կը հայցեր համայնքային կեդրոնը կառուցելու համար, Քռասնիի բնակչութեան 300 հոգիէն պակաս ըլլալու իրողութիւնը բարերարին համար ծրագիրը ալ աւելի գրաւիչ կը դարձնէր: Արդարեւ, Բաղդասարեան կը հաւատար որ Արցախի իւրաքանչիւր գիւղը, անկախ իր ծաւալէն կամ դիրքէն, թանկագին է, հաւասարապէս արժանի մեր ուշադրութեան եւ խնամքին:

մը հրատապ խնդիրներ: Ասոնց շարքին է այն իրողութիւնը, որ գիւղապետարանը տարիներէ ի վեր կը գործէ խարխուլ շէնքի մը մէջ, եւ այն իրողութիւնը, որ գիւղի դարմանատունը տեղադրուած է գիւղի դպրոցին մէկ անկիւնը՝ փոքր սենեակի մը մէջ:

Համայնքային կեդրոնը, որու բացումը նախատեսուած է 2018-ի ամրան համար, պիտի ներառէ ոչ միայն գիւղապետարանը, վարչական գրասենեակներ,



Architectural rendering of the Krasni community center. / Քռասնիի համայնքային կեդրոնի ճարտարապետական յղացքը:



The Baghdassarian family. / Բաղդասարեան ընտանիքը:

Նոր գրասենյակներով օժտելը, անգնահատելի է, որովհետեւ ժպիտ կը բերէ երեխաներու դէմքերուն, կը զօրացնէ անոնց կապը իրենց վարժարանին հետ: Եթէ ամէն հայ թիկունք կանգնի Հայաստան Հիմնադրամին՝ մեր հայրենաբնակ քոյրերուն ու եղբայրներուն կեանքերը բարելաւելու առաքելութեան, երեակայեցէ՞ք ինչ հսկական յառաջդիմութիւն կ'արձանագրուի»:

Քռասնիի մէջ, Բաղդասարեանի ակնարկած յառաջդիմութիւնը պիտի յատկանշուի քաղաքացիական եռանդուն, ստեղծագործ, եւ կենսուրախ գոյութեամբ մը, որ պիտի միջհիւսուի գիւղի Նորակառոյց համայնքային կեդրոնին հետ: Շնորհիւ այս կեդրոնին, քաղաքապետարանային սպասարկութիւնները պիտի կատարուին աննախընթաց դիւրութեամբ ու արդիւնաւետութեամբ. գիւղի երեխաներն ու երիտասարդները պիտի կարենան ընդլայնել իրենց հորիզոնները կեդրոնի գրադարանին ու համակարգչային սրահին ընդմէջէն, մասնաւորաբար համացանցային կապի օգնութեամբ.

հանդիսութիւններու դահլիճը պիտի գործածուի թատերական ու շարժապատկերային ներկայացումներու, ինչպէս նաեւ վանապան հաւաքոյթներու ու խրախճանքներու համար. եւ դարմանատունը բարձրորակ խնամք պիտի տրամադրէ բնակչութեան՝ ջերմ ու հանգստաւետ սենեակներու մէջ:

Այս բոլորը մաս կը կազմեն այն գեղեցիկ տեսլականին, զոր Յակոբ Բաղդասարեան փայփայեց իր ամբողջ կեանքի ընթացքին: Ան մնաց-միշտ համեստ, անխոնջ, եւ խորապէս ներշնչող պահապան հրեշտակ մը, որ հապարաւոր մղոն հեռուէն երազեց բարելաւել իր հայրենակիցներու կեանքերը, եւ տուաւ առատաձեռնօրէն՝ իր նպատակի իրականացման համար:



Եւ դարմանատունը, այլ նաեւ հանդիսութիւններու սրահ մը, գրադարան մը, եւ համակարգչային սենեակ մը: Ամբողջովին արդիական կառոյց մը ըլլալով, համայնքային կեդրոնը պիտի ունենայ ջեռուցման ու օդափոխութեան համակարգեր, այլ ժամանակակից յարմարութիւններու շարքին: Ծրագրին մաս կը կազմէ նաեւ շէնքի բովանդակ կահաւորումը, ինչպէս նաեւ համակարգիչներով ու համացանցային կապով օժտումը: Նպատակը բազմաձալ է – համակարգել ու բարելաւել գիւղի հանրային ծառայութիւնները, խթանել քաղաքացիական աշխուժութիւն,

եւ, վերջին հաշուով, բնակիչներուն տալ համոզիչ պատճառ մը եւս՝ շարունակել ապրելու ու աշխատելու իրենց ծննդավայրին մէջ:

«Ոչինչ կը բաղդատուի այն խայտանքին, որ կը բխի օգնելու արարքէն եւ օգնութեան արդիւնքը տեսնելէն. երանի ամէն մարդ կարենայ ապրիլ այդ խայտանքը», Բաղդասարեան յայտնած էր վերջերս կատարուած հարցազրոյցի մը ընթացքին եւ շարունակած՝ «Ինծի համար, Նոյնիսկ յարաբերաբար փոքրածաւալ ծրագիր մը, ինչպէս, օրինակի համար, դպրոցի մը դասարանները

Armenia Fund, Inc. 
 111 N Jackson St Ste 205
 Glendale, CA 91206
 Phone: 1-800-888-8897
 Email: info@armenianfund.org

NONPROFIT
 PRSRT STD
 U.S. POSTAGE
 PAID
 MMP

TV GUIDE



ARMENIA FUND'S 20th INTERNATIONAL THANKSGIVING DAY **TELETHON 2017** NOVEMBER 23



12 HOUR LIVE WEBCAST AT WWW.ARMENTIAFUND.ORG

CITY-STATE-REGION	STATION	DIGITAL CHANNEL	CABLE CHANNEL	SATELLITE	TIME
Southern California Greater Los Angeles Area	KSMV & KVMD Ch. 31.1	31.1	Charter Ch. 21 & Ch. 29 Time Warner Ch. 23 AT&T U-Verse Ch. 23 Verizon FiOS Ch. 23 Armenian Cable Channels	DirecTV Ch. 31 DISH Ch. 31	10am to 10pm PST
Central California Fresno & Mid-State	KGMC Ch. 43.6 13.1 or 31.7	43.6, 13.1 or 31.7	Comcast Xfinity Ch. 375 Northland Ch. 2 Northland Ch. 9 Noor TV Ch. 31.7		10am to 10pm PST
San Francisco Bay Area San Francisco, Oakland, San Jose, Berkeley, & others.	KTSF Ch. 26.1	26.1	Comcast Ch. 8, 21, or 26 Charter Ch. 8 or 98 AT&T U-Verse Ch. 8 Google Fiber Ch. 8	DirecTV Ch. 26 or 893 DISH Ch. 26 or 8237	10am to 7pm PST
Las Vegas	KNBX Ch. 31.1 ArMount TV	31.1	Moy Dom TV Ch. 156 iBox TV Ch. 200		10am to 10pm PST
New York New Jersey Connecticut Eastern PA	WMBC TV Digital Ch. 63.1	63.1	Cablevision Ch. 20 Cablevision Ch. 86 Cablevision Ch. 117 Comcast Ch. 17 Comcast Ch. 19 Comcast Ch. 20 Comcast Ch. 23 Comcast Ch. 24 Comcast Ch. 32 Comcast Ch. 63 Nuvision Ch. 78 RCN Ch. 19 Verizon FiOS Ch. 18	DISH Ch. 63 or 8115 DirecTV Ch. 63 or 895	1pm to 1am EST
Chicago, IL Southeast WI Northern IN Southwest MI	MCTV Digital Channel 62.2	62.2	Comcast Ch. 386		1pm to 1am EST

For all other locations please tune in to our live webcast at: www.armenianfund.org